

13.	ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ SOCIOLOGY AND POLITICS СОЦИОЛОГИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ НАУКИ
-----	--

**Մ. ՕՈՒՔԵՇՈՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ա. Ա. ՔԱԼԱՇՅԱՆ

*Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ Սփյուռքի նախարարության գլխավոր մասնագետ*

XX դարի վերջին քառորդին հասարակության քաղաքական կյանքում տեղ գտած արմատական տեղաշարժերով պայմանավորված՝ սոցիալական փոփոխության և քաղաքագիտական մտքի առջև ամենայն սրությամբ կանգնեց ներկայացուցչական ժողովրդավարության էության և նրանում ժողովրդական զանգվածների ունեցած տեղի և դերի, ինչպես նաև քաղաքական ազատության, մասնակցության և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի ուսումնասիրությունը: Արևմտյան քաղաքագիտական մտքի ներկայացուցիչների մասնահատուկ ուսումնասիրության առարկա դարձավ հատկապես մերօրյա ներկայացուցչական ժողովրդավարությանը բնորոշող «զանգվածային մարդու» հայեցակարգը, որի առաջամարտիկներից էր բրիտանական հասարակական և քաղաքական փոփոխության ականավոր ներկայացուցիչ Մ. Օուքեշոտը¹:

Հիմնահարցին վերաբերող փաստական նյութի վերլուծությունը տեսաբանին բերել է այն համոզման, որ ժողովրդավարական և ներկայացուցչական արդի հասարակարգերում դրսևորվող քաղաքական ակտիվության և քաղաքական վարքի փոփոխությունները սերտորեն կապված են Եվրոպայի նոր դարաշրջանի պատմության հոգեզավակը համարվող «զանգվածային մարդու» գործառնության հետ: Մասնագիտական գրականության համեմատական վերլուծությամբ քաղաքագետը փաստում է նաև այն, որ «զանգվածային մարդ» երևույթն այնքան նշանակալից դեր է կատարել քաղաքագիտության տեսության և քաղաքական պրակտիկայի համակարգում, որ շատերը նրան «ճաշակի և նախապատ-

¹ Ներկայացուցչական ժողովրդավարության համակարգում «զանգվածային մարդու» Մ. Օուքեշոտի հայեցակարգային հիմնադրույթները տես *Оукешотт Майкл*. Массы в представительной демократии / Антология мировой политической мысли. В 5-и томах. Т. II, М., 1997, с. 449-464.

վությունների դատավորի» դեր են վերագրում և անգամ հիմնավորում են, թե նրա ազդեցությամբ է որոշվել նաև բռնապետերի և «չթագադրված արքաների» քաղաքականությունը: Մյուսները «զանգվածային մարդ» երևույթի ձևավորումը որակում են որպես «բոլոր հեղափոխությունների մեջ ամենահեռուն գնացող» երևույթ: Հեղինակների մի այլ խումբ էլ պնդում է, որ երևույթն իրենով պայմանավորել է ապրելակերպի և ընդհանրապես քաղաքական ակտիվության, քաղաքական մասնակցության և քաղաքական վարքագծի տիպերի փոփոխությունների դինամիկան: Եվ, ասես, ի մի բերելով վերլուծական այդ բազմազանության արդյունքները՝ անգլիացի քաղաքագետն ընդհանրացնելով պնդում է, որ այդ ամենով հանդերձ՝ «զանգվածային մարդը» ունանց մոտ մտավախություն է ծնել, մյուսների մոտ՝ հիացմունք և բոլորի մոտ՝ զարմանք: Այդ պատճառով էլ տեսաբանը, քաղաքական կյանքում «զանգվածային մարդ» երևույթի էությունը այլաբանորեն պարզաբանելով, գրում է. «Նրա («զանգվածային մարդու»՝ Ա. Ք.) բազմաթիվ լինելը վերջինիս վերածել է գիզանտի, որը ներթափանցում է ամենուր, նրան համարում են մորեխի պարս, որը երբեմնի ծաղկուն պարտեզները վերածում է անապատի, կամ համարում են նոր, ավելի բարձր քաղաքակրթության կրող»²:

Հակասական այդ տեսակետները համարելով «ծայրահեղություն»՝ Մ. Օուքեշոտը հավասարակշռված մոտեցմամբ պնդում է, որ քննարկվող երևույթը ոչ միայն կարելի է ճշմարտացի գնահատել, այլև այդ հենքի վրա կարելի է բացահայտել այն, թե մարդու այդ նոր տիպի ձևավորմամբ ինչպիսի նոր որակներ են մուտք գործել քաղաքական կյանք: Այդ նպատակով նա առաջին հերթին անդրադառնում է այն հարցի պարզաբանմանը, թե ինչ է իրենից ներկայացնում «զանգվածային մարդը», ինչպես է այն գոյավորվել և ինչպիսին է եղել նրա ձևավորման գործընթացը: Այդ դիրքերից պնդելով, որ «զանգվածային մարդու ձևավորումը բավականին երկարատև գործընթաց է, որը գրեթե անհնար է հասկանալ, եթե չգիտակցվի այդ երկարատևությունը»³, հիմնահարցի լուծման իր տեսակետը վերլուծաբանը կառուցում է այն համոզման հիման վրա, որ «զանգվածային մարդու» ձևավորումն ամենևին էլ XVIII դարի Ֆրանսիական մեծ հեղափոխության կամ XVIII դարավերջի արտադրական հեղաշրջման արդյունքը չէ, և որ այդ երևույթի ակունքները պետք է որոնել XV-XVI դարերի բարդ ու հակասական ժամանակաշրջանում: Նա համոզված է, որ «զանգվածային մարդու» գոյավորման ակունքներում ընկած է նրանից էապես տարբերվող «անհատականության» ձևավորման գործընթացը: Քաղաքագետն այդ մոտեցումը բացատրում է նրանով, որ «վերլուծվող օբյեկտի» կայացումն ընթացել է «երկու թատերաբեմով», հետևաբար՝ եթե դրանք պահանջվող մակարդակով ուսումնասիրության չենթարկվեն, ապա անխուսափելիորեն կհանգենք սխալ եզրակացությունների⁴:

Պատմական անդրադարձ կատարելով Արևմտյան Եվրոպայի վերջին չորս դարերի քաղաքական պատմությանը՝ Մ. Օուքեշոտն ուշադրությունը կենտրոնացնում է այն փաստին, որ պատմական այդ դարաշրջանում ավանդական ապ-

² *Оукешотт Майкл*. Массы в представительной демократии, с. 449.

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

րելակերպի կարծրատիպերի և դրանց բնորոշ հսկողության ձևերի աստիճանական քայքայման արդյունքում ձևավորվել և որոշակի ժամանակահատվածում վերելք է ապրել **«մարդ անհատականությունը»**: Նա մաս պնդում է, որ հասարակության զարգացման այդ փուլը պատմական հսկայական նշանակություն է ունեցել այն տեսանկյունից, որ ուղեկցվել է հասարակական գործունեության բոլոր ոլորտների, այդ թվում նաև քաղաքական իրավունքների ու ազատությունների ծավալմամբ: «Արևմտյան Եվրոպայում նման իրավիճակի առկայությամբ բնութագրվում են հատկապես XIV և XV դարերը: Հենց այդ դարաշրջանում բարենպաստ բացառիկ պայմաններ ձևավորվեցին մարդկային անհատականության զարգացման բարձր մակարդակ ապահովելու համար: Վարքագծի և հավատի ոլորտում հրապարակ իջավ ակտիվորեն «ինքնապատճառավորման» փորձ կուտակող և դրանով հրճվող մարդկանց բավականին ազդեցիկ մի թիվ, և այդ իմաստով նշված դարաշրջանը անհամեմատելի է այն ամենի հետ, ինչը նախապես գոյություն է ունեցել: Նախկինում ոչ մի տեղ անկախ, ինքնուրույն անձնավորությունների (այսինքն՝ անհատների, որոնք մշտապես իրագործում էին սեփական ընտրությունը) ձևավորումը չի հանգեցրել մարդկային հարաբերությունների այդպիսի խոր ու տևական փոփոխությունների, նման ազդեցիկ ռեակցիա չի ծնել և փիլիսոփայական հայեցակարգերի լեզվով այդպիսի համակողմանի հիմնավորում չի ստացել»⁵:

Հասարակական և քաղաքական կյանքին ուղեկցող այդ փոփոխությունների վերլուծությամբ քաղաքագետը փաստում է, որ Եվրոպայի մոր պատմությանը բնորոշ արմատական այդ փոփոխություններն անհատի և անհատականության նկատմամբ իրենցով ոչ միայն որակական մոր վերաբերմունք են պայմանավորել, այլև էապես նպաստել են ինքնագիտակցության և ինքնաճանաչողության աճին: Ինքնին հասկանալի է, որ այդ գործընթացների վրա էական է նաև ժողովուրդների ազգային և պատմամշակութային ինքնության ազդեցությունը, որը նկատի ունենալով՝ Մ. Օուքեշոտը պնդում է, որ անհատական և հասարակական գիտակցության և վարքագծի մեջ տեղ գտած այդ փոփոխություններն ու փոխակերպումները շարունակվել են յոթ երկար դարեր և տարբեր երկրներում դրսևորվել են տարբեր կերպ: Քաղաքագետը պատմական այդ տևական շրջանի համար բնորոշ է համարում նաև դրական այն փոփոխությունների համախումբը, որը միտված է եղել ձերբազատվելու «համայնքային կյանքի կապանքներից», և որը նախապես շոշափել է տղամարդկանց, ապա՝ կանանց շահերը: Վերլուծաբանը պնդում է նաև այն, որ քաղաքական ակտիվության աճին նպաստող այդ գործոններն օբյեկտիվորեն խթանել են ինքնաճանաչողության աճը, որի հանրագումարային արդյունքն էլ եղել է այն, որ մարդիկ ձերբազատվել են «սեփական կատարելության վախից»: Եվ այդ համատեքստում մատնանշելով անհատական գործոնի և հատկապես ինքնագիտակցության դերը՝ նա պնդում է, որ այդ ճանապարհով Ադամից և Պրոմեթևսից անցում է կատարվել Պրոթեստի տիպի անհատականության, որը նախորդներից տարբերվում է ինքնաճանաչողության բազմակողմանիությամբ և անսպառնալիքությամբ⁶: Այդ ամենի ընդհանրացմամբ նաև հա-

⁵ Նույն տեղում, էջ 450:

⁶ Տե՛ս նույն տեղում: Վերլուծաբանը նաև հավելում է, որ հասարակական և քաղաքական

վելում է, որ վարքագծի և հավատի հարցերում անհատականության բարձր աստիճանի առկայությունը ոչ միայն ավելի ու ավելի է առաջին պլան մղել մարդու և մարդկային «երջանկության» կարևորությունը, այլև դարձել է **նոր ժամանակների եվրոպայի ծնունդ համարվող «անհատականության» կարևորագույն բնութագրերից մեկը**:

Քաղաքագետը փաստում է, որ նշված գործընթացները միահարթ չեն ընթացել, ունեցել են իրենց թռիչքներն ու անկումները, որոնք արտացոլվել են հատկապես դարաշրջանի ամենապահպանողական՝ հավատքային, ինչպես նաև ամենադինամիկ՝ բարոյականության դաշտերում: Ահա թե ինչու այդ գործընթացները մի քանի հարյուրամյակ շարունակ «... համակողմանիորեն հիմնավորվել են էթիկական և փիլիսոփայական հայեցակարգերում, անհրաժեշտաբար գիտակցվել են իշխանության կողմից և հանգեցրել են քաղաքական ինստիտուտների և վարքագծի ձևափոխումների՝ խոր ազդեցություն ունենալով արվեստի, կրոնի, արտադրության և առևտրի, մարդկային գործունեության և մարդկային հարաբերությունների բոլոր տեսակների վրա»⁷: Քաղաքագետը նաև հավելում է, որ տեսական-ինտելեկտուալ ոլորտում այդ գործընթացների գնահատումներն առավել խորությամբ արտացոլվել են էթիկական հայեցակարգերում: Տեսաբանը պնդում է, որ քաղաքական կյանքի ձևավորման հասարակական միջավայրի նշված փոփոխություններն իրենցով պայմանավորել են նաև **գիտակցության ազատականացման** գործընթացների ծավալումը, որի արդյունքում գիտակցությունը սկսել է դիտարկվել որպես «զգայական փորձի այլատարբերակ»: Համապատասխան տեղաշարժեր են տեղ գտել նաև XVII-XVIII դարերի փիլիսոփայական և բարոյագիտական հայեցակարգերում, որի հետևանքով «անհատի» և «անհատականության» որակական հատկանիշները սկսել են դիտարկվել սեփական «ես»ի և «այլերի» փոխհարաբերության դիրքերից: Մ. Օուքեշոտը նաև պնդում է, որ հայեցակարգային այդ ըմբռնումները տեսական ամփոփ տեսք են ստացել Ի. Կանտի ջանքերով, որի արդյունքում մարդն սկսել է դիտարկվել որպես բնական անհրաժեշտության շղթայի մի օղակ՝ **բանական էակ և անհատականություն**: Այդ հիման վրա փիլիսոփան մարդ անհատականության վարքագծում կարևորել է հատկապես «ինքնավարության համապարփակ պայմանները», որոնցից գլխավորը համարել է մարդու ինքնահայեցումը և ինքնագիտակցումը: Իսկ բարոյական է համարվել մարդու՝ անհատականության անկրկնելիությունը, այսինքն՝ մարդը դիտարկվել է որպես նպատակ և ոչ մի դեպքում՝ միջոց: Համամիտ ձևով Մ. Օուքեշոտը ևս պնդում է, որ «Բարոյական այն է, որում ընդունվում է անհատի անձնական անկրկնելիությունը, որտեղ էլ այն հանդես գա» և կրկնելով Ի. Կանտին՝ գրում է. «... անհատն այնքան սրբազան է համարվում, որ ոչ ոք իրավունք կամ պարտականություն չունի նպաստելու մյուսի բարոյական կատարելությանը. մենք միայն կարող ենք նպաստել մյուսների «երջանկությանը», բայց մենք իրավունք չունենք փորձելու «կատարելագործել» նրանց, քանի որ

կյանքում նշված փոփոխությունների ազդեցությունը այնքան ակնհայտ է եղել, որ «XVI դարի կեսերին ... անգամ ժնկի կալվինիստական վարչակարգը՝ իր ողջ դաժանությամբ հանդերձ, չկարողացավ ճնշել մարդկանց ձգտումը ապրել և գործել ինքնավար, անկախ անձնավորության որակով» (նույն տեղում):

⁷ Նույն տեղում, էջ 452:

դրանով կխախտվի նրանց ազատությունը»⁸:

Քաղաքագետն ակնհայտ է համարում այն, որ անհատի և անհատականության նորոշվող ըմբռնումը ոչ միայն սերտորեն շաղկապված է անհատականության կայացման հետ, այլև ինտուիտիվ կերպով պահանջում է համապատասխան պայմաններ ստեղծել անհատականության զարգացման համար: Ավելին, այդ ամենով պայմանավորված՝ քաղաքական կյանքում ևս իշխանության պարտականությունների նորոշվող ըմբռնման պահանջ է զգացվել, որի ընդհանրացված արդյունքն էլ այսօր համարվում է «ներկայացուցչական ժողովրդավարությունը»: Անդրադառնալով վերջինիս բնութագրությանը՝ քաղաքագետը գրում է. «Այն չպետք է դիտարկել ոչ իբրև կառավարման իդեալական ձև, ոչ էլ իբրև անտիկ աշխարհի որոշ մարզերում կարճատև գոյություն ունեցած կառավարման ձևի մոդիֆիկացիա (որի հետ նա որևէ ձևով կապված չէ): Այն պետք է հասկանալ որպես Արևմտյան Եվրոպայում ձևավորված երևույթ, որտեղ միջնադարյան իշխանության և կառավարման ինստիտուտների վրա անհատականության ոգու ազդեցությունը առավելագույն էր»⁹:

Այդ ամենի հիման վրա փորձելով պարզաբանել արդի ներկայացուցչական ժողովրդավարությանը բնորոշ անհատականության էությունը՝ Մ. Օուքեշտն առաջնային է համարում մի շարք հիմնախնդիրների պարզաբանումը: Այդ ոլորտում նա առաջին հերթին առանձնացնում է այն հիմնահարցը, թե **իշխանությունն ինչպես ընդունակ գտնվեց անհատական շահերը և նպատակները վերածել փոխադարձության վրա հենված օրենքի և պարտականությունների:** Պատասխանելով այդ հարցին՝ նա առանձնացնում է իշխանության գործառնական երեք ատրիբուտներ: Ընդհանուրից միակի և գերագույնի առանձնացումը, այսինքն՝ իշխանական լիազորությունների կենտրոնացումը մեկ կենտրոնում. այդ ճանապարհով է ձևավորվում անհատի ձգտումներն ու զարգացումը կասեցնող «համայնքի ճնշումից» ազատագրված «ինքնավար անհատականությունը»: Հին իրավունքը նորով փոխարինվելու գործառնական երկրորդ ատրիբուտ է համարվում իշխանության «սուվերենությունը»: Տեսաբանը պարզաբանում է, որ այդ ճանապարհով է ստեղծվել կառավարման այն տիպը, որի պայմաններում իրավունքներով լիազորված անձինք հանդես են գալիս որպես «խաղընկերներ», այսինքն ձևավորվում է այնպիսի իշխանություն, որին ուղղակի կամ միջնորդավորված մասնակից են հասարակության բոլոր խավերը: Իսկ անցման փուլն ապահովող երրորդ ատրիբուտը պարտադրում է, որ իշխանությունը պետք է լինի բավականին ուժեղ և կենսունակ, ի գործու լինի պաշտպանելու կարգ ու կանոնը, առանց որի անհատները չեն կարող արդյունավետորեն իրականացնել իրենց ձգտումները: Բայց հեղինակը միաժամանակ հիշեցնում է, որ այդ ուժը ոչ ոչ մի պարագայում չպետք է վտանգի հասարակական ու անհատական ձգտումները¹⁰:

⁸ Նույն տեղում, էջ 453:

⁹ Նույն տեղում, էջ 453-454:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 454: Մ. Օուքեշտնը նաև հավելում է, որ քաղաքական հարաբերությունների զարգացման այս փուլում «... շահերի՝ իրավունքների և պարտականությունների ձևափոխության ընդունված մեթոդները իրավաբանական բնույթի էին՝ միջնադարյան

Ամդրադառնալով անցման էության մեկնաբանությանը՝ քաղաքագետը պարզաբանում է, որ «Կառավարիչը և իր սուբյեկտները ներկայացնող խորհրդարանը հանգեցին համատեղ օրենքներ «ստեղծելու» գաղափարին: Եվ այդ օրենքները սկսեցին խթանել ինքնավար անհատականության շահերը: Նրանք ապահովեցին ինքնաիրացման համար անհրաժեշտ այնպիսի պայմանների ստեղծումը, որը նշվում է «ազատություն» բառով: Ընդ որում, երաշխավորվեցին իշխանական կառույցների կողմից հնարավոր նվազագույն սահմանափակումները և համայնքի հարկադրական ճնշումից ազատ յուրաքանչյուրի կենսագործունեությունն իրականացնելու իրավունքը»¹¹: Մ. Օուքեշոտն անցման այդ փուլի կարևորագույն ձեռքբերումներից է համարում ազատ տեղաշարժի, օրենսդրական նախաձեռնությունների, խոսքի, կրոնական հավատի և ծեսերի, ասոցիացիաներ կազմակերպելու և արձակելու, ժառանգության իրավունքի, սեփականության, անհատի անվտանգության, զբաղմունքի ընտրության ազատությունը, սեփական աշխատանքի և նրա արդյունքների տնօրինումը և, վերջապես, «օրենքի իշխանության» ամենազլխավոր ու ընդհանրացնող սկզբունքը՝ ենթակայության և կառավարելի լինելու համընդհանուր և բոլորի նկատմամբ կիրառվող իրավունքը: Նա նաև պնդում է, որ «Անհատների այդ իրավունքները որևէ մեկ հասարակական դասակարգի արտոնություններ չեն, այլ հավասարապես համարվել են ամեն մի սուբյեկտի իրավունքը»¹²:

Պատմական սկզբունքի կիրառմամբ քաղաքագետը փաստում է, որ «խորհրդարանական» կառավարման տեսքով իշխանության այս ձևն ամբողջացել է XVIII-XIX դարերի սահմանագծում և նրա հիմնական պարտականությունն է համարվել անհատի շահերի պաշտպանության մեխանիզմների ներդրումը: Նա հիմնավորում է, որ այդ գործընթացի լրացման տեսքով տեսական ոլորտում ասպարեզ է իջել **անհատականության քաղաքական փիլիսոփայությունը**, որն ամրագրվել է էթիկական հայեցակարգերով: Քաղաքագետը նաև պարզաբանում է, որ այս ամենն աչքի է ընկել իր աստիճանականությամբ, ինչը պայմանավորել է նաև անհատականության առանձնահատկությունները: Իսկ «մասնավոր» գործունեության մեխանիզմների աստիճանական ներդրման արդյունքում «ծնվել է ժամանակակից անհատականությունը»¹³: Անհատականության փորձի կուտակումն իր հերթին նպաստել է նրա հետագա աճին և «կարևորագույն արժեք» լինելու նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանն ու ծավալմանը: Այդպես է կայացել նաև քաղաքականության ակտիվ սուբյեկտի՝ ինքնավար անհատականության առավելությունները պահպանելու և այդ առավելություններից օգտվելու ցանկությունը: Մ. Օուքեշոտը համոզված է, որ այդ «առավելությունների» արդ-

«խորհրդարանները» և «խորհուրդները» գերազանցապես իրավական հաստատություններ էին: Բայց այդ հաստատություններից ծնվեցին ինստիտուտներ, որոնք առավել հստակ կերպով նպատակամղվեցին այն բանին, որպեսզի ճանաչեն մոր ձևավորվող շահերը, դրանք կերպարանափոխեն մոր իրավունքների և պարտականությունների. այդպես են ձևավորվել օրենսդրական կառույցները»:

¹¹ Նույն տեղում, էջ 454:

¹² Նույն տեղում, էջ 455:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 455:

յունքում **էմպիրիկ փորձը բարձրացել է էթիկական տեսության մակարդակի**, ինչն իր արտահայտությունն է գտել իրավունքների, պարտականությունների և ընդհանրապես նոր ձևավորված կառավարման և իշխանության իրականացման մեխանիզմներում:

Այդ ամենի հիման վրա քաղաքագետը հանգում է այն հետևության, որ «Ինքնավար և անկախ անհատականություն լինելու ձգտման ամբողջացումը Եվրոպայի նորագույն պատմության ամենամշանավոր իրադարձությունն է»¹⁴: Ընդ որում, անհատականության ձևավորման գործընթացում հեղինակը մեծ տեղ է հատկացնում նաև **ընտրության ազատությունը** խթանող պայմանների ձևավորմանը և գրում, որ այդ գործընթացը պահանջում է յուրահատուկ գործունեության իրականացում: Նա համոզված է, որ շատերի համար այդ հնարավորությունը վերածվել է քաղաքան ակտիվության խթանի, սակայն նաև հավելում է, որ այդ գործընթացի կրողները հստակորեն բաժանվել են երկու խմբի: Առաջիններն այն ընկալել են վստահությամբ և ակտիվորեն ներգրավվել են այդ գործընթացում, իսկ երկրորդները կրավորական դիրք են որդեգրել: Եվ այդ ամենի արդյունքում այն, ինչ առաջինների համար ընկալվել է իբրև երջանկություն, երկրորդները համարել են «անհարմարավետություն», եթե առաջինների համար փոփոխությունները համարվել են դրական, ապա երկրորդներն այն որակել են որպես անկումային:

Վերլուծական այդ ձևաչափի շրջանակներում Մ. Օուքեշտոն առաջադրում է նաև այն տեսակետը, որ Եվրոպայի պատմության նոր շրջանում «... ծնվել է անհատականության ոչ թե մեկ, այլ երկու տիպ. ոչ միայն ինքնավար անկախ անհատականությունը, այլև «մշակված անհատականությունը»: Նա պնդում է, որ «մշակված անհատականությունը» ամենևին էլ «... անցյալ դարաշրջանների ժառանգությունը չէր, նա նույնպես հանդես է եկել որպես անհատի նոր տիպ, նույն այն համայնքային կապերի անկման արդյունք, որը ծնել էր նաև Եվրոպական նոր տիպի անկախ անհատականությանը»¹⁵: Ինչ վերաբերում է «մշակված անհատականության» էությանը, ապա քաղաքագետը համոզված պնդում է, որ նա, լինելով շրջապատի «թշնամական միջավայրին» հարմարվելու առավել թույլ տարր, պրակտիկայում որոնել է այնպիսի պաշտպան, որն ընդունակ կլիներ պաշտպանել իրեն, թեթևացնել իր ծանր իրավիճակը: Որոշակի առումով նա այդպիսի պաշտպան գտավ հանձին իշխանության: Այդ ճանապարհով է «ֆրոնտորացված մշակված անհատականությունից» ձևավորվել շրջապատող աշխարհին իրեն համապատասխանեցնելու ձգտող և անկախ անհատականության բարոյական արժանիքները ոտնահարող մարտնչող «հակաանհատականությունը»: Այս վերջինիս ոչ մի խոստում, ինքնազարգացման և ինքնակատարելագործման ոչ մի առաջարկ չի գաթակղել. նա գիտակցել է, որ իր անհատականությունը չափազանց աղքատիկ է, որպեսզի հավատա բարեհաջող զարգացման հնարավորությանը կամ հաճույք ստանա այդ գործընթացից: Դրա համար էլ նրա ակտիվության ներքին ազդակը եղել է անհանգստությունից և տագնապներից ձերբազատվելու ձգտումը և այն հավատամքը, որ ինքը կատարյալ անհատականու-

¹⁴ Նույն տեղում, էջ 456:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

թյուն չէ: Դրանով է բացատրվում նաև այն, որ նա ձգտել է մեկուսանալ շրջապատող աշխարհից և այն ամենից, ինչը նա համարել է «անհամապատասխանություն» հիմք¹⁶:

Մյուս կողմից, ինչպես Մ. Օուքեշտոն է պնդում, ներքին շարժառիթների թելադրանքով «մշակված անհատականությունը» հարկադրված է եղել «ազատության որոնումները» սահմանափակել բարոյական ազդեցությունից զերծ և մեկուսացած «սեպարատիստական» համայնքներում, որով փորձել է հրաժարվել այն ամենից, ինչն իրեն հիշեցրել է սեփական անկատարությունը: Եվ այդ ամենն իրական են դարձել միայն այն պարագայում, երբ նա գիտակցել է, որ ինքը ոչ միայն միայնակ չէ, այլև պատկանում է «անհատական ընտրության առջև» չկանգնած եվրոպական նոր հասարակության առավել մեծաթիվ դասակարգին: Ահա թե ինչու այդ ամենի ընդհանրացմամբ քաղաքագետը հանգում է այն եզրակացության, որ «... իր թվաքանակի գերազանցության գիտակցումով «հակաանհատը» միաժամանակ սկսեց իրեն գիտակցել որպես «զանգվածային մարդ» և ճանապարհի հարթեց այն իրավիճակից, որի մեջ գտնվում էր, դուրս գալու համար»¹⁷:

Անդրադառնալով «զանգվածային մարդու» բնութագրիչների վերլուծությանը՝ Մ. Օուքեշտոն առանձնացնում է էական և իր կարծիքով հիմնարար մեկ գիծ, այն, որ նա «**մյուսներին թույլ է տալիս լինել միայն իր կրկնությունը**», այսինքն՝ առանց որևէ տարբերակման նա գրեթե լիովին մերժում է ընտրության հնարավորությունը: Տեսաբանը նաև պնդում է, որ յուրատիպ այդ հատկանիշի առկայության պայմաններում «զանգվածային մարդը» չունի բարեկամներ, քանի որ բարեկամությունը անկախ և ինքնավար անհատականությունների հարաբերություն է, բայց ունի ընկերներ: Այդ ամենի ընդհանրացմամբ վերլուծաբանը հանգում է այն եզրակացության, որ «Այն որակով, որով «զանգվածները» հանդես են գալիս եվրոպայի նոր պատմության մեջ, կազմվում են ոչ թե անհատականություններից, այլ՝ «հակաանհատականություններից», որոնք միավորվում են անհատականությունը մերժելու հենքի վրա»¹⁸: Վերլուծաբանը նաև պնդում է, որ քաղաքական կյանքում այդ որակով հանդես եկող «հակաանհատն» ամենից առաջ բնութագրվում է զգացմունքների, այլ ոչ թե մտքի, բնազդների, այլ ոչ թե հայացքների ու կարծիքների առկայությամբ, նրա գործունեության մեջ բացակայում են հմտություններն ու խանդավառության կիրքը, որի հետևանքով միայն աղոտ պատկերացումներ ունի իր ուժի մասին: Եվ, ըստ տեսաբանի, դա է պատճառը, որ «... **նա առաջնորդների կարիք է զգում**, որ իրականում «առաջնորդի» արդի ըմբռնումը անխզելիորեն կապված է «հակաանհատի» հետ և բացատրելի չէ առանց նրա (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»¹⁹: Այդ պնդումը հիմնավորելու միտումով Մ. Օուքեշտոն պարզաբանում է նաև, որ կառավարման կարիք կարող է ունենալ միայն անկախ անհատականությունների ասոցիացիան, որի պատճառով էլ նրանում առաջնորդները տեղ չունեն: Դա բացատրվում է նրանով, որ հա-

¹⁶ Նույն տեղում, էջ 457:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 458:

մապատասխան պայմանների առկայության դեպքում ինքնուրույն և անկախ անհատականության բնագոյները ձևախփվում են ցանկությունների, իսկ ցանկությունները՝ մտադրությունների և նախագծերի: Նրան միայն պետք է թույլ տրվի գիտակցել իր ուժը, և այդ ամենով նա ինքն է դառնում իր առաջնորդը²⁰:

Անցման շրջանի արևմտաեվրոպական քաղաքական կյանքի համակարգված վերլուծությամբ Մ. Օուքեշտը փաստում է, որ իրավիճակը միանգամայն այլ է «զանգվածային մարդու» պարագայում: Ենթակա լինելու վերջինիս հակումը, ըստ նրա, նպաստում է համապատասխան առաջնորդների ի հայտ գալուն: Նա պնդում է, որ «զանգվածային մարդն» անկասկած գործիք էր, որը «վիրտուոզ կատարող էր պահանջում»: Բայց այդ դերը կատարելու համար պիտանի տիպ արդեն գոյություն ուներ: Դրա համար պահանջվում էր այնպիսի մեկը, որը միաժամանակ կարող էր լինել իր հետևորդների և՛ տերը, և՛ ծառան, որը կարող էր թեթևությամբ ընտրություն կատարել ավելի շատ ուրիշների, քան իր փոխարեն, առավել հակված էր խորանալ ուրիշների գործերում, քանի որ ինքը բավարարություն չէր գտնում սեփական գործերով զբաղվելու պարագայում: Այդ բնութագրություններով օժտված էր հենց «մշակված անհատականությունը», որի զարգացման գործում ձեռք բերած նվաճումներն ու անհաջողությունները նրան համապատասխանեցրին այդպիսի առաջնորդությանը: Նա բավականաչափ նման էր ինքնավար անհատին, որպեսզի անձնական բավարավածություն փնտրեր իր անհատականության դրսևորման մեջ, բայց ոչ այնքան նման, որի հետևանքով նա բավականություն էր գտնում միայն ուրիշներին հրամայելու մեջ²¹: Համոզված, որ «զանգվածային մարդու» համար ավելի տիպական առաջնորդ հնարավոր չէր գտնել, քաղաքագետը պնդում է, որ «զանգվածային մարդը» և «հակաանհատ առաջնորդը» բարոյական միևնույն իրավիճակի երկու փոխկապակցված կողմերն են, որոնք փոխադարձաբար մեղմացնում են սեփական ֆրոստրացիաները և բավարարում միմյանց պահանջները: Բայց նա նաև հիշեցնում է, որ դա ամենևին էլ չի կարելի որակել որպես «թեթև գործակցություն», քանի որ բնագոյներով առաջնորդվող «զանգվածային մարդն» ավելի շուտ հակված էր ենթարկվել, քան թե առաջնորդի նկատմամբ լոյալ լինել: «Իսկ առաջնորդի կողմից իշխանության անհագ ծարավը հաճախ հանգեցնում էր այն բանին, որ նա իր կողմնակիցների մոտ այնպիսի հույսեր էր ծնում, որոնք սկզբունքորեն բավարարել չէր կարող»²²:

Համակողմանիորեն քննարկելով նշված երևույթների պատճառահետևանքային կապերը՝ Մ. Օուքեշտը գալիս է այն եզրակացության, որ Արևմտյան Եվրոպայի քաղաքական կյանքում «հակաանհատականության կողմից ներդրված» բոլոր հետևանքներից կարևորագույնը երկուսն են. «Նա ծնել է մի բարոյականություն, որը նախանշված էր փոխարինելու անհատականության բարոյականությանը, և ծնել է կառավարման ձևի ու իշխանական ինստիտուտի այնպիսի ընկալում, որը համապատասխանում էր իր էությանը»²³: Ձարգացնելով այդ տեսա-

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 458:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 458-459:

²³ Նույն տեղում, էջ 459:

կետը՝ քաղաքագետը գրում է, որ իրականում դա **նոր բարոյականություն էր**, քանի որ ձևավորվել էր անհատականության նկատմամբ ընդդիմության որակով և պահանջել էր հաստատել մարդկային գոյության նոր պայմաններ՝ «սեր համայնքի նկատմամբ»: Այդ բարոյականության հիմքում ընկած էր մարդկային կեցության առանձնահատկությունն արտացոլող «համընդհանուր բարիքի» գաղափարը, բայց՝ եսակենտրոն ըմբռնումով: Դրա շուրջն էլ ձևավորվել է լուսաբանող հասկացությունների մի ողջ համախումբ, որի առանցքը կազմել է «համայնքի հավասարազոր անդամների»՝ «անհատ միավորի» կամ մարդու ուսմունքը: Այդ իսկ պատճառով քաղաքագետն այն համարում է **փոխադարձ համաձայնության բարոյականություն**, որի զարգացման արդյունքում էլ XX դարասկզբին ասպարեզ իջավ «զանգվածային մարդը»: Բարոյական այդ ըմբռնումները համարելով «խարխուլ կառույց»՝ վերլուծաբանն իր մոտեցումը հիմնավորում է նրանով, որ այն իր էությամբ «երբեք չի համապատասխանել ինքնավար անհատականության բարոյականության ըմբռնումներին»: Սակայն միաժամանակ հավելում է, որ այդ ճանապարհով տրվում է «զանգվածային մարդու» բավականին պարզունակ բնութագիրը:

Բանն այն է, որ քաջ գիտակցելով իր ձգտումներն ու նպատակները՝ «հակաանհատի» կողմից «Իշխանություն և կառավարչական գործունեություն իրագործելու ընթացակարգը նույնացվել է իշխանության կողմից այն ամենը պարտադրելու և պաշտպանելու հետ, ինչը համարվել է «հասարակական բարիք»». «հակաանհատի» ըմբռնմամբ կառավարելի լինել՝ նշանակում էր իր փոխարեն ընտրություն կատարել, ինչն ինքը կատարել չէր կարող: Այս պարագայում իշխանության նշանակությունը նույնացվում է «համընդհանուր բարիք» հաստատելու ճարտարապետի և վերահսկողի դերի հետ»²⁴:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ **տեսաբանը հեռու է «զանգվածային մարդուն» թերագնահատելու մտքից**: Հակառակը, գտնելով, որ մարդկային այդ տիպի կողմից կյանքի կոչված առաջնորդները որոշակի հիմնահարցերի կարգավորմամբ զբաղվող «տեսաբաններ էին», քաղաքագետը միաժամանակ պնդում է իշխանության և կառավարման այդպիսի տիպի անհրաժեշտությունը: Վերլուծական այդ ձևաչափին լիովին համահունչ է նաև Մ. Օուքեշոտի այն պնդումը, որ այդ առաջնորդները միաժամանակ «գործունեության մարդիկ էին», որոնք ոչ միայն բացահայտում են «զանգվածային մարդու» ուժը, այլև ցույց են տալիս, թե ժամանակակից ժողովրդավարության իմստիտուտները ինչպես կարող են համապատասխանեցվել նրա ձգտումներին ու պահանջումներին: Ջարգացնելով արժեքային այդ մոտեցումը՝ քաղաքագետը եզրակացնում է, որ եթե անհատականության ձգտումներով ծնունդ առած կառավարման ձևն ընդունված է անվանել «խորհրդարանական կառավարում», ապա «զանգվածային մարդու» գործունեության արդյունքում վերջինիս ձևափոխված տարատեսակը կարելի է բնութագրել որպես «ժողովրդական կառավարում» և մատնանշում է, «... որ դրանք կառավարման երկու միանգամայն տարբեր ձևեր են»²⁵: Տեսաբանը գտնում է, որ համանման կերպ ձևավորվել են նաև համապա-

²⁴ Նույն տեղում, էջ 461:

²⁵ Նույն տեղում:

տասխան իրավական նորմերը: Ահա թե ինչու նա գրում է, որ «զանգվածային մարդու» համար անհատականության իրավունքները «իմաստազուրկ» էին, դրա համար էլ նրա կողմից միանգամայն նոր իրավահամակարգի **պահանջ** է առաջադրվել, այնպիսին, որն իսպառ բացառում էր անձնական ընտրության անհրաժեշտությունը: Կարելի է նաև ասել, որ սեփական էությանը համապատասխան՝ նա ստեղծեց այնպիսի իրավահամակարգ, որը հենված էր անձնական ընտրության իրավունքից հրաժարման վրա: «Մի խոսքով նա պահանջում էր իր էությանը համապատասխանող իրավունքներ, «ինքնադետերմինացիայի» ծանրությունից ազատագրող հասարակական պաշտպանվածության պայմաններում ապրելու իրավունք»²⁶, և այդ ճանապարհով սեփական էությանը համապատասխան ստեղծվեց իր **անվտանգությունն** ապահովող օրենսդրությունը:

Ահա թե ինչու քաղաքագետը համոզված է, որ «խորհրդարանական կառավարման» և «ժողովրդական կառավարման» կիրարկած իրավունքները ոչ թե լրացնում, այլ ուղղակի հակադրվում են մեկը մյուսին: Դրա պատճառը նա համարում է այն, որ «զանգվածային մարդու» ուժն իր բազմաքանակության մեջ լինելով՝ **իշխանությանը պաշտպանում է քվեարկության ճանապարհով:** Իսկ **նրա իշխանությանը լծակից խորհրդարանական պատգամավորը ոչ թե անկախ անհատականություն է, այլ սոսկ «մանդատ կրող»,** որի խնդիրն է նպաստել հասարակական կյանքի այն փոփոխություններին, որը պահանջում է «զանգվածային մարդը»: Այնուհետև տեսաբանը եզրակացնում է, որ այդ ամենով «ժողովրդական կառավարությունը» գործնականում դարձել է «զանգվածային մարդու» լրացումը, և սահմանադրական ու քաղաքական վարքագծի ընթացակարգերով և «ձևական կանոններով» ծնվել է **քաղաքականության նոր՝ ոչ թե «կառավարման», այլ՝ «առավելագույն ծայներ» հավաքելու արվեստ:** Եվ քանի որ «զանգվածային մարդու» գերխնդիրը պատասխանատվությունից և սեփական ընտրությունից հրաժարումն է, ըստ վերլուծաբանի, նա, ով ի գործուկլինի բավարարել այդ պահանջները, կարող է «անսահմանափակ իշխանության» պահանջ առաջադրել և ստանալ²⁷:

Մ. Օուքեշոտի հայեցակարգում հիմնավորվում է նաև այն, որ «զանգվածային մարդը» ամենևին էլ միայն թվաքանակով չի բնութագրվում: Նա աչքի է ընկնում իրեն բնորոշ գծերով, քանի որ քաղաքական կյանքում հանդես է գալիս յուրատիպ գծերով: Անդրադառնալով «զանգվածային մարդուն» բնորոշող գծերի քննական արժևորմանը՝ քաղաքագետն էական է համարում հետևյալները. 1) «զանգվածային մարդն» այնպիսի թույլ անհատականություն ունի, որ երբ բախվում է ուժեղ անհատականությանը, ապա ըմբոստանում է և դիմում «հակաանհատականության» օգնությանը, 2) նա ծնել է իր անհատականության էությանը համապատասխանող բարոյականություն, իշխանության և կառավարման ձևերի ըմբռնում, որոնք նրա համար անհրաժեշտ են «խորհրդարանական կառավարումը» մոդիֆիկացնելու համար, 3) պարտադիր չէ, որ նա լինի «աղքատ» և նախանձի «հարուստներին», պարտադիր չէ, որ նա «անկիրթ» լինի, հաճախ նա պատկանում է **մտավորականության խավին**, նա պատկանում է այն դասին,

²⁶ Նույն տեղում, էջ 462:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 462-463:

որը ճշգրտորեն որևէ այլ դասակարգի չի պատկանում, 4) նրան բնութագրում է ոչ թե ինտելեկտուալ, այլ առաջին հերթին բարոյական հակումը: Նա ծագում է «փրկության» և լիովին բավարարվում է նրանով, որ իրեն «ազատում են ընտրություն կատարելու ծանրությունից», 5) նա վտանգավոր է ոչ թե իր հայացքների և գիտակցվող ցանկությունների պատճառով, որից զուրկ է, այլ ենթարկվելու իր պատրաստակամությամբ: Նա ցանկանում է իշխանությանն օժտել այնպիսի հնարավորություններով ու լիազորություններով, որոնք նա երբեք չի ունեցել, նա կատարյալ անընդունակ է տարբերել «կառավարչին» և «առաջնորդին» և 6) թեև «հակաանհատականություն» լինելու նրա հակվածությունը որոշակի իմաստով բնորոշ է ամեն մի եվրոպացու, բայց «զանգվածային մարդու» մոտ այն գերակշռող է²⁸:

Այդ համատեքստում միանգամայն տրամաբանական է Մ. Օուքեշտի այն պնդումը, որ «զանգվածային մարդու» բնութագրական առանձնահատկությունների վերլուծությունն ինքնանպատակ չէ, քանի որ այն «բազմաթիվ հետևանքներ» ունի, իսկ առավել «արատավոր և նենգ» հետևանքներից ձերբազատվելը քաղաքական պրակտիկայի կարևորագույն հիմնախնդիրներից է: Այդ հիման վրա անդրադառնալով «զանգվածային մարդու» քաղաքական գործունեության հնարավոր բացասական հետևանքների քննական արժևորմանը՝ Մ. Օուքեշտն ամենից առաջ մատնանշում է, որ այն աշխարհը, որտեղ «զանգվածային մարդը» կարող է յուրացնել «հասարակական իշխանության ամբողջությանը», կլինի այնպիսին, որտեղ կառավարչական գործունեությունը կհանգի բացառապես հասարակությանը «միատեսակ պայմաններ պարտադրելու» քաղաքականությանը: Երկրորդ՝ այդ աշխարհում «խորհրդարանական կառավարումն» իր տեղը լիովին կգիջեր «ժողովրդական կառավարմանը», իսկ անհատականության «քաղաքացիական» իրավունքները կփոխարկվեին հակաանհատականության «հասարակական» իրավունքների: Երրորդ՝ «զանգվածային մարդու» հզոր հարձակումը թեև ցնցեց, բայց ի գորու չեղավ կործանել անհատականության բարոյական հեղինակությունը. «հակաանհատականությունն» անգամ չկարողացավ ձերբազատվել նշված բարոյականության հեղինակությունից: Իսկ դա նշանակում է, որ «անհատականության զարգացման ցանկությունը» մեղմացնում է «զանգվածային մարդու» ապակառուցողական ճնշումները և, վերջապես, «ինքնորոշման երջանկության» նկատմամբ «զանգվածային մարդու» նողկանքը հեշտությամբ տարալուծվում է իր նկատմամբ խղճահարության մեջ: Կարևորագույն բոլոր դրսևորումներում անկախ անհատականությունը շարունակում է իրականություն լինել, իսկ «հակաանհատականությունը» նրա ստվերն է միայն²⁹:

²⁸ Նույն տեղում, էջ 463-464:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 464:

Մ. ՕՈՒԷՏԻՈՒՄ Օ ՄԱՍՏԱՅ ՔՐԵԴՏԱՎԻՏԵԼՆՈՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅ

Ա. Ա. Կալաշյան

Բաժանումը նվիրված է «մասսայական մարդ»-ի մասին Մ. Օուքեշոտի մտածողությանը:

Ստանալով, որ աշխարհի քաղաքականությունը կախված է սուբյեկտիվից, Մ. Օուքեշոտը «մասսայական մարդ»-ի մասին քննարկում է ընդհանուր առմամբ: Նրա վերաբերմամբ եվրոպական պատմության վերաբերյալ իր վերաբերմունքը, որը տարբերվում է անհատականությունից, մոտեցման անբավարարականությունից, պատրաստակցությունից ենթարկվելու և «ընդունում է միայն իր փոփոխությունները»: Մ. Օուքեշոտը «մասսայական մարդ»-ի մասին բնութագրում է «միասնական մոտեցման (մոտեցման միասնականության)» տեսակետով, քանի որ նրանք «միասնականության մոտեցման» դեմ չեն:

Մ. Օուքեշոտը պնդում է, որ «մասսայական մարդ»-ը խաթմվել է, բայց չի ոչնչացրել մոտեցման անհատականությունը: Երբեք այնպիսի անհատականություն չի եղել, որը չի լքվում անհատականության իրականությունից, քանի որ «մասսայական մարդ»-ը միայն անհատականության ստված է:

Մ. ՕՈՒԷՏԻՈՒՄ Օ ՄԱՍՏԱՅ ՔՐԵԴՏԱՎԻՏԵԼՆՈՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅ

Ա. Ա. Կալաշյան

Assuming that the world of politics depends on the scope of the subjective, M. Oakeshott is considering the problem of “mass man” in this context. Based on the analysis of European history, he concludes that “mass man” “militant antiindividual”, “a new type of personality”, which is characterized by a weak personality, moral inadequacy, willingness to obey and “allows others to be merely a repetition of himself/herself”. A mass of these “antiindividuals” is characterized by “a single moral situation (morality of mutual solidarity)” because they are not “facing a situation of personal choice”.

M. Oakeshott also argues that “the world of mass man” is shaken, but did not destroy the moral prestige of the individual. In all important manifestations the independent individual continues to remain the reality, the “mass man” is a mere shadow of the latter.

Մ. Օ. ՕՈՒԷՏԻՈՒՄ Օ ՄԱՍՏԱՅ ՔՐԵԴՏԱՎԻՏԵԼՆՈՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅ

Ա. Ա. ՔԱՆԱՇՅԱՆ

*Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ Սփյուռքի նախարարության գլխավոր մասնագետ*

Ժողովրդավարության և ժողովրդավարական քաղաքական համակարգերի հետ կապված հիմնահարցերն առաջնակարգ տեղ են գրավել XX դարի քաղաքագիտության տեսության շրջանակներում: Այդ ոլորտում ուրույն տեղ է հատկացվել պոլիարխիայի¹ հայեցակարգի համակողմանի հիմնավորմանը, ինչն էլ

¹ Պոլիարխիա (հուն.՝ poli բազմաթիվ և arche կառավարում, իշխանություն) եզրով բնու-